ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երեւան-10, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3

Հեռ/ֆաքս. (+374 10) 524-641
էլ.փոստ.agro@minagro.am

Ի պատասխան Ձեր _____ N _____ _____ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղահրամանյան,

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N238-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 101-րդ կետի՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանը «310102. Ագրոնոմիա», «310104. Բույսերի պաշտպանություն», «310105.Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա», «310404. Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «310506. Ագրոէկոլոգիա», «310201. Անասնաբուծություն», «310301.Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» և «310302. Անասնաբուժություն» մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի մինչև 50%-ի չափով կազմակերպում է նպատակային ընդունելություն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

Նշված մասնագիտությունների գծով նպատակային ընդունելություն կազմակերպելու համար՝ խնդրվում է մինչև 2012 թվականի մայիսի 25-ը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել համապատասխան հայտեր:

Հարգանքով՝

ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գիտության, կրթության և
խորհրդատվության վարչության
պետի ժ/պ Զ.Գաբրիելյան
հեռ.՝ 29 74 28